

ՄԵԼԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 բուլղի կէս տարւան 6 բուլղի
Առանձին համարները 5 կոպէկով:

Թիֆլիսում գրուած են միմիայն խմբագրատան մէջ:

Մեր հասցէն. Тифлис, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն):

Յայտարարութիւն ընդունուած է առն լեզուով:

Յայտարարութիւնները համար վճարուած են
իւրաքանչիւր բառին 2 կոպէկով:
Տէլէֆոն № 253.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հեռաւոր ազդեցութիւններ.—Ներքին Տե-
սիսութիւն. Այլ եւս հարկաւոր չեն. Ռուսաց
թաւրոն. Նամակ Ալեքսանդրովից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍԻՍՈՒԹԻՒՆ. Թաւրիսի ազանները. Արտա-
քին լուրեր.—Հեռուագրութիւն.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒ-
թիւն լուրեր.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Նամակ Անգ-
լիայից:

ՀԵՌԱՆՈՐ ԱՂԵՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Պատերազմական գործողութիւնները
վերջանալուց յետոյ Հեռաւոր Արեւելքը
ներքից սկսեց իր կանոնաւոր տնտեսական
կեանքը: Այնտեղի վաճառանոցները իրանց
պահանջներով մի որոշ կենդանութիւն
մոցընի եւրոպական արդիւնաբերութեան
մի երկու ձիւղերու եւ կարող են Հեռա-
ւոր ազդեցութիւն ունենալ նոյն իսկ մեր
երկրի մի քանի արդիւնաբերութիւններ
վրայ:

Հեռաւոր Արեւելքից, օրինակ, ստացվել
են պատուէրներ ուղարկելու այնտեղ բաւ-
բակիէն ձոթեր: Գործարանների պատ-
րաստած Հին պաշարները արդէն սպառ-
վել են կամ սպառվելու վրայ են եւ պա-
հանջ կայ նոր կերպարաններ պատրաստելու:
Իսկ բամբակի հունձը այնքան առատ է, որ
որքան սպասվում էր: Ամերիկայում, որտե-
ղից եւրոպական գործարանները ստա-
նում են բամբակի ամենամեծ քանակու-
թիւնը, բամբակը վառ է ածել եւ սկսել է
վաճառանոցներում թանգանալ: Այդ Հան-
գամանքի ազդեցութեան տակ Ռուսաստա-
նի գործարանները սկսել են ուշի ուշով
հետեւել բամբակի գների փոփոխութեան:
Եւ թէ երբեք չառաքածաւոր տեղի
է ունեցել, բայց եւ այնպէս նկատվում է
բամբակի վաճառանոցում մի փոքր կենդա-
նութիւն:

Բարեփոխութիւն մի թոյլ չափով նկատ-
վում է եւ մեր երկրի միւս արդիւնների
վաճառահանութեան վերաբերութեամբ:
Նաւթի գինը իր չափազանց ցածր գրու-
թիւնից սկսել է բարձրանալ: Բուրդը, որ
բոլորովին չէր պահանջվում, սկսել է
ծախվել: Այդպէս եւ մի քանի ուրիշ նիւ-
թերի վերաբերութեամբ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑ

Լօնդօն, յունիսի 20-ին

Մեծ միտինգ բոլորեցի օգոստոսի

Այս միտինգը, որի մասին ձեռնարկած կը
լինի հետագիւր, շատ ընտրու էր թէ անգլիա-
կան կառավարութեան համար, որը չը գաւա-
հանվել իր աւանդութիւններին, վերստին
պաշտպանում է խօսքի ու խղճի ազատութիւ-
նը նոյն իսկ այն դէպքում, երբ քաղաքակ-
խօսում են իր պատերազմական թշնամու օգ-
տին.—Եւ թէ ազգաբնակչութեան արդի տրա-
մադրութեան տեսակետից Այդ միտինգով ար-
տայալով թէ անգլիական ազնիւ շինարար-
նութիւնը, որը գիտէ յարգել իր հերոս թշնա-
մուն եւ ճանաչել ու պաշտպանել նրա իրա-
ւունքները, եւ թէ իմպերիալիստ շինարարը,
որը նման եւ եղբայրակից ֆրանսիական նա-
ցիօնալիզմին, Գերմանիայի եւ Աւստրիայի ան-
տիսեմիտիզմին, ամեն տեղ երեւան է գալիս
«ազգաբնակչութեամբ» քողարկված իր գոհնիկ
նիւթապաշտութեամբ, ուրանալով եւ ճգնելով
խեղդել այն բոլոր ճշմարտութիւնները, որոնք
որ եւ է կերպով անյարմար են իր ուրիշներին
կեղծեցելու եւ նրանց հաշիւի հարաւանալու
դիտումները իրագործելուն:

Անկասկած՝ եղած փոփոխութիւնը դեռ
աննշան է, բայց եւ այնպէս նա ցոյց է
տալիս, որ ներկայումս գների ազդեցու-
թիւնը մի երկրից անցնում է միւսը եւ
արտայայտվում է այն խուլ անկունե-
րում, որոնք մինչեւ այժմ ազատ էին շրջա-
կայ երկրների մէջ տիրող տնտեսական
պայմաններից:

Այդ Հանգամանքը մեզ թելադրում է
լայնացնել մեր դիտողութիւնները եւ ու-
սումնասիրութիւնները շրջանը, երբ կա-
մենում ենք որոշել մի երկրի տնտեսական
վիճակը: Եւ քանի գնայ՝ զանազան երկր-
ների մէջ եղած կարգը եւ միմեանցից առա-
ջացած կախումը պէտք է աւելի մեծա-
նան եւ խորանան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍԻՍՈՒԹԻՒՆ

ԱՅՆ ԵՒ ՎԱՐԿԱՆՈՐ ԶԵՍ

Ընթերցողներին յայտնի է Բագում տիրող
գրամական տագնապը: Գործերն ընկել են,
արդիւնաբերութիւնը անքուս է, նորարարող
ընկերութիւնները կաղում են, շատ կոկոն-
ներ անձաղկել մնացին, բացառններից էլ չա-
տերն իսկոյն թառամեցին: Հարստութիւն այլ
եւս դժուարութեամբ կը բռնեն բոլոր այն
թունդ քաղաքի խմած պարոնները, որոնք դա-
նազան ընկերութիւններ կաղմելու համար
յանձն էին առնում խոհանոցներ իսկ մանկ եւ
խոհարարներին ու լակէյներին բաժին ծախել:

Մենք նպատակ ունենք այդ իսկապէս ցա-
ւալի եւ անբարոյական-աֆերիստական գոր-
ծողութիւնների նկարագիրը անել: Ցաւալի է,
ի հարկէ, այդ դրութիւնը եւ թէ այս փորձն
էլ մի խրատական դաս չի լինի մեր «տեղիցը»
վեր կենդանի նաւթարդիւնաբերողների համար,
—կրկնակի ցաւալի:

Այս դէպքում եթէ մեզ խօսեցնող մի առիթ
կայ,—դա գործաւոր, աշխատաւոր դասակար-
գի նոյն խարխուլ վիճակն է, դա նոյն զրկված
ու մոռացված մասսան է, որին քամելու հա-
մար ամեն կատարելագործութիւնների հասած
ասիացի դրամատիկներ իր լուրջ եւ մարդկա-
յի (եթէ ունի) ուղադրութեանը չէ արժանապ-
րել եւ այսօրվայ օրը երէկվայ քրտինք թա-
փողին նա առանց պատկանելու «այլ եւս հար-
կաւոր չեն» վարձատրութեամբ ճանապարհ է

Դուք գիտէք որ, չորսին ներկայ անկրթ եւ
քաղաքիչ պատերազմի, Անգլիայի այժմեան
կառավարութիւնից դժգոհ շրջանների թիւը
բազմացել է: Մի կողմից առեւտրական եւ ար-
դիւնաբերական շրջաններում տիրող ճգնաժա-
մը, նոր նոր տուրքերը—ինչպէս վերջերս ա-
ծուի եւ չաքարի վրա դրածը, միւս կողմից
«Daily News»-ում եւ «Morning Leader»-ում
հրատարակվող բազմաթիւ նամակները, որոնք
գրված են պատերազմի դաշտից զինուորների
կամ ուրիշ ակնատեսների ձեռքով եւ ցոյց են
տալիս զարհուրելի դէպքեր, կոտորածներ անգ-
լիացի զօրքերի ձեռքով—ինչպէս, օրինակ,
բոլորների կարողութեանը այրել, նրանց կա-
նանց եւ երեխաներին ուժով զօրաբանակնե-
րում տեղաւորել, որտեղ նրանք ապրելով վա-
տառող պայմաններում մեռնում են հարկու-
րեցի, հնարակական ճառերը եւ ազատամիտնե-
րի ուրիշ պարագլուխների պարլամենտում կա-
ռավարութեան ուղղած անախորժ եւ նեղիչ
հարցումները—այս բոլորը աւելի եւ աւելի էին
պարզում ազգաբնակչութեան համար պատե-
րազմից առաջացած վնասները եւ վրդովում
հասարակական կարծիքը—Ձեզ յայտնի է նոյն-
պէս, որ նախկին սըր, այժմ լորդ Ալֆրէդ Մի-
նքի հետ համարեա միաժամանակ հասան այն-
տեղ եւ աֆրիկանդներին երկու նշանաւոր
ներկայացուցիչները—Նախկին մինիստր Զաուէր
եւ Մարիմա, որոնք եկան «պատմելու անգ-
լիական ժողովրդին երկրի իսկական կացու-
թեան մասին»—եւ արդարութիւն պահանջելու

ձեռք: Դեռ երկար ժամանակ նա այդ անպէտք
դարձած վաստակաւորի աշխատած դիվիզիոն-
գով պիտի ապրէ, նա նոր է փակել անցեալ
տարվայ հաշիւները, որի թւերը ստեղծել եւ
գրել են անցել ու հազարներով եկամուտի հետ
իրանց տիրող տուել այսօրվայ անգործները...
Ի՞նչն է մեզ խօսեցնել տալիս. նոյնը չէր
միթէ եւ առաջին տարիներում. նոյնը չը տե-
սանք արդեօք նախանցեալ տարի, երբ այսպի-
սի մի տագնապի ենթարկվեց Բագուն: Մեծա-
գոյն մասին արտաքինից, առանց այն էլ ծան-
րաբեռնված մնացածների վրա դնելով առա-
ջինների պարտականութիւնները... Ոչ, այժմ
խօսելու աւելի իրաւունք ունենք, այժմ յու-
սալու աւելի մեծ շանք: Ինչպէս, որովհետեւ
այժմ նաւթարդիւնաբերողների եւ խոշոր հիմ-
նարկութիւնների ղեկավարների շարքում դուք
կը գտնէք եւ նախկին մանկավարժ, լրա-
գրական գործիչ, հրապարակախօս եւ այլն
սրանց նման պարոններ, որոնց համար հասա-
րակական, իդէալական գործունէութիւնը, ի-
րանց ասելով, մի հաճոյք էր, մարդիկ, որոնք
անխնայ հարուստում էին չարը, անարդարու-
թիւնը, զրկանքների հեղինակներին, զեղխու-
թիւնը, քարատրտութիւնը եւ այլն: Անկասկած,
ընթերցող, մեղաւորիս հետ դուք էլ կը ցըն-
ծայիք, որ կապիտալիստ տիրանում են մար-
դիկ, որոնք նրա թագաւորը կը լինեն, եւ ոչ
ստրուկը:

Բայց իրականութիւնը... Այս անգործ հայե-
լին ոչ մի նոր հոսանք, նոր արամագրութիւն
չէ ցոյց տալիս: Գէթ մասնաւոր խորհրդակ-
ցութեան նիւթ դարձրին այդ պարոնները, դի-
ցուք, ծառայող դասակարգի դրութիւնը, փոր-
ձեցին հերթական խնդրի դարձնել զարը ջըր-
տինքով ներկված՝ միմիայն 12 ժամով ապահով
արդեօք այդ երէկվայ արդարութեան համար
կուրծք ծեծողները նոր գաղափարներ մտցնել
հին, իրանց ասելով, քաղաքացի կաստայի մէջ:

Ռ. Յովհաննիսեանց

ՌՈՒՍՍԻԱ ԹԱՏՐՈՆ

Կոմս Լ. Տօլստօյ «Լուսաւորութեան պտուղ-
ներ» (Плоды Просвѣщенія) անունով պիեսը
այս անգամ երկու անգամ արվեց, մէկը՝
Լիւվիգովի դերասանական խմբի, միւսը Պրա-
դինի խմբի կողմից: Վերջին ներկայացումը

նրանից:
Մի քանի դժուարութիւններից յետոյ երէկ,
վերջապէս, նշանակվեց մի ժողովրդական մի-
տինգ, լայնու պ.պ. Զաուէրին եւ Մարիմա-
նին եւ նրանց հայեացքները Հարաւային Աֆրի-
կայի ճգնաժամի վերաբերմամբ: Զինգայական
թերթերը դեռ մի օր առաջ սկսել էին հրա-
ւերներ կարդալ ազգաբնակչութեան «հազարնե-
րով գնալ դէպի Queens Haall-ը, որտեղ նշա-
նակված էր միտինգը, ցոյց տալու իրանց ազ-
գաբնակչութիւնը եւ խափանելու դաւաճանների
միտինգը»: Բնորոշ է, որ մի այդպիսի շրջա-
րեւրական ամենից առաջ դուրս եկաւ Stock-
Exchange-ից, այսինքն բօրսայից: Միտինգը նը-
շանակված էր ժամը 8-ին, բայց արդէն 6-ից
սրահի մուտքերը եւ շրջակայ փողոցները բռն-
ված էին հազարաւոր մարդով, որը ազգասի-
րական երգեր էր երգում, ազգասէր ճառա-
խօսներին, անցնող զինուորներին եւ ազգային
ղրոշակներին ծափահարում եւ հաւանութեան
աղաղակներ էր արձակում: Սառնարին եւ
յաղթանդամ օտարականները դժուարութեամբ
էին պաշտպանում սրահի դռները եւ բօքս-
ներին համարող քաղաքացիներին, որոնց
կեանքը բառացի կերպով վտանգի մէջ էր:
Միտինգը կազմակերպողները նախատեսած ի-
նչով այդ տեսակ անկարգութիւններ, վազօրօք
մուտքի տոմսակները ցրել էին ընտրութեամբ—
ու սրահի ներսում կարգը պահպանելու հա-
մար հրաւիրել էին մօտ 700 «վերակացուներ»
(stewards):

Միտինգին ներկայ էին պարլամենտի ան-

տեղի ունեցաւ երեքշաբթի, յունիսի 19-ին:

Տօլստօյի պիեսի մէջ հանդէս է բերված
առեւ ինտելիգենտ հասարակութեան այն մա-
սը, որը կտրել է իր բարոյական կապը գիւղա-
կան ժողովրդի հետ եւ զբաղեցնում է իր ուղե-
ղը մտքի այսպիսի սխալ արտայայտութիւն-
ներով, ինչպէս են սպիրիտիզմ եւ ղեկադնե-
տութիւն, կամ ոչնչով չէ պարապում եւ անձ-
նատուր է եղել անձնական վայելքներին:

Կալուածատէր Զվեգլինցի (Պադարին), պրո-
ֆեսօր Կրուզոսկով (Պարզին) եւ իրանց
չրջապատողները թողել են կեանքի խոշոր
հարցերն ու հոգսերը եւ բան ու գործ են չի-
նել սպիրիտիզմի եւ հիպնոտիզմի ներկայա-
ցումները:

Նրանց հակապատկերն են ներկայացնում
պիեսի մէջ դուրս բերված գիւղացիները, ո-
րոնք եկել են քաղաք կալուածատիրոջ մօտ
գնելու նրանից հող եւ միայն մի հոգս ունեն՝
չուտով աղողեցնել իրանց գործը եւ վերա-
դառնալ գիւղը զբաղվելու իրանց տնտեսու-
թեամբ:

Պիեսից հանդիսականը տեսնում է, որ գիւ-
ղացին ոչինչ չաւ բան չէ կարող յուսալ իր
համար այնպիսի ինտելիգենտից, ինչպիսին
ներկայացված է պիեսում: Այդպիսի ինտելի-
գենտին խղճալի տպաւորութիւն է գործում,
որովհետեւ նա անգործ է որ եւ օգտաւէտ
գործ կատարելու: Նա այնպիսի խախուտ ճա-
նապարհի վրա է, որ հեղուկութեամբ ենթար-
վում է պատահականութեան աղղեցութեան
եւ խաղի ու ծաղրի առարկայ է դառնում մի
աղախու (Տուրանինովա) կողմից:

Պրադինի խումբը բնորոշ գծերով ներկա-
յացրեց պիեսի մէջ դուրս բերված շրջանը:

ՆԱՄԱԿ ԱՆԳԼԻԱՅԻՑՈՂԻՑ

Յունիսի 10-ին

Նղջիւրաւոր անասունների ժամանաւոր օտա-
կալի վնասներ է տալիս մեր գաւառի շինական
ժողովրդին: Կան գիւղեր, որոնք իսպառ զբո-
ղեցին իրանց կթան կովերից եւ լծկաներից:
Լացն ու կոծը սոսկալի է: Քաղաքի հետ յա-
րաբերութիւնը կտրված է: Հիւանդութիւն
յայտնված գիւղերում սպանված անասունները
այրոււ են նաւթով:

Այս տարի եղանակը շատ բարեյայտը էր
արտերի եւ ցանքերի համար, բայց մեր գա-

ղաներ, համայնարանի պրոֆեսորներ, եպիս-
կոպոսներ եւ 5—6 հազար ունկնդիրներ Ու-
ղարկված էին եւ բազմաթիւ համակարական նա-
մակներ: Խօսվեցան բազմաթիւ ճառեր, որոնց
մի քանիսից առաջ եւս բերում կտորներ: Նախ
խօսեց նախագահը, պատգամաւորների ժողովի
անդամ Լարդէր, որին ընդունեցին երկար
ծափահարութիւններով եւ կեցցէներով:

«Պ. Զաուէր եւ Մարիմանը եկել են մեր եր-
կիրը արտայայտելու ոչ թէ միայն իրանց ան-
հատական հայեացքները տեղի ունեցող անց-
քերի վերաբերմամբ, այլ կարծում են, որ ի-
րանց հայեացքները բաժանում է եւ նորին
մեծութեան Հարաւ Աֆրիկայում քնակվող հը-
պատակների մեծամասնութիւնը: Պատերազմը
դեռ հետո է վերջանալուց եւ մեր կառավա-
րութեան քաղաքականութիւնն է՝ «կուռ մին-
չեւ որ վերջանալ» (ձայներ. «ամօթ»): Այդ լե-
զուն պատշաճ է աւելի նրանց, որոնք գո-
տեմարտի են դուրս գալիս վարձատրվելու նը-
պատակով: (Մտախարութիւններ): Այդ քա-
ղաքականութիւնը ոչ թէ միայն անտարմարան
է, այլ եւ անխել: Ի՞նչ պատասխան է տալիս
մեզ պ. Բրոդրիկը, որ կանայք ու երեխաները
տեղաւորված են բանակներում, որովհետեւ
բօքսները նրանց առանց կերակուրի պիտի
թողնէին: (Միծաղ): Պ. Բրոդրիկը առում է նոյն-
պէս, որ այդ բոլոր զրկանքների պատճառը ի-
րանք բօքսներն են, որովհետեւ նրանք պիտի
անձնատուր լինէին (ծաղր, զրբիցներ եւ ծի-
ծաղր): Եթէ գերմանացիները կամ ֆրանսիացի-
ները նուաճէին մեր երկիրը, մենք անձնատուր

առում անասունների ցուր պատճառով շատ արտեր մնացին առանց ցանկում Նշան շատ արտեր, որոնց տեղերն ուտեցնում էին ցանա- ծը կովերին եւ եղջերին՝ խոտ չը լինելու պատճառով, որովհետեւ արգելված էր գուրս տանել անասունները եւ արածացնելու Դա սար- սափելի մնաւ էր տնտեսութեան համար, Ու- րովհետեւ մի ցանած արտը որպէս խոտ արժէ զիցուք 5 ր., մինչդեռ այդ արտից կարելի էր սպասել բարեյաջող հունձի ժամանակ 50 ր. ցորենու Ուրեմն վնասը տասն անգամ աւելի է։

Մեր քաղաքայինները շատ նեղութիւն են կրում ուտեստի կողմից։ Գաւառի հետ յարա- բերութիւնը կորված է. շատ թանձ են պա- նիրը, իւղը, կարագը եւ միսը։ Միւս շատ օրեր չէ ձմարում։

Թէ որքան մեծ նշանակութիւն ունի խօսքով եւ գրով տեղեկացնել ցաւերի տեսակների եւ նրանց դէմ մարտնչելու հնարների մասին ժո- ղովորդին հասկանալի լեզուով, դա անուրանա- լի է։ Շատ ուրախ ենք, որ մեր քաղաքի յար- գելի բժիշկ Ն. Տէր-Իսահակեան այս օրերս հրատարակեց ժողովրդի համար բժշկական գրքիկներ, որոնք իրանց պարզ ոճով եւ ըս- վանդակութեամբ շատ մեծ օգուտ կարող են տալ մեր ժողովրդին, որը հետզհետէ կընտե- լանայ առողջապահական կանոններին։ Յանկա- լի է, որ այդ գրքիկներից աւելի շատ տա- րածվին նաեւ մեր գիւղերում, որտեղ դեռ տիրում է սարսափելի խաւար եւ անպատմելի տգիտութիւն։ Ազնիւ սերմը չի կորչի իգուր, այլ կարողա՞րէ ցանկալի պտուղ։

Շիրակցի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Բազու, յունիսի 2-ին

Կարդալով «Մշակ»-ի 112 №-ի ներքին լու- բերի բաժնում Բազուից տպագրված լուրը, որը վերաբերում է մի խումբ սիրողների տուած ներկայացման, խնդրում ենք տեղ տալ հետեւեալ մի քանի տողերին։

Ապրիլի 7-ին մենք, մի խումբ սիրողներս, տեղիս արտիստական ընկերութեան դահլիճում, յօգուտ Ախալքալաքի երկրաչարժից վնասված- ների, ներկայացրինք «Սմալէ» ողբերգութիւնը, բայց որովհետեւ ոչ միայն ծախսերը չը ծածկվե- ցին, այլ եւ մեզանից իւրաքանչիւրը դեռ իր գրպանից ծախսեր արեց այդ գործը գլուխ բերելու համար, ուստի յարմար չը գտանք մեր անաջող ներկայացման մասին գրել մի որ եւ լրագրի, բաւականաւորով միայն պ. ոստիկանապետի հրամանով այդ երե- կոյ նշանակված քաղաքիս երկրորդ մասի պրիստաւ պ. Բոստամբեկովին ներկայացրած մանրամասն հաշուով։

Պ. լրատուն ասում է, թէ ներկայացումը բաւական հանդիսականներ էր գրաւել թատ- րոն։

Իսկապէս կարող էր այդ նպատակը բաւա- կան հանդիսականներ գրաւել, եթէ միայն ժա- մանակին կարողանայինք յայտարարել ներ- կայացման մասին ու աֆիշաները կայցնել պա- տերին, սակայն մեզ այդ չաջողվեց։ Ապրիլի 6-ին միայն ստանալով թոյլտուութիւնը, մենք այդ օրը երեկոյեան միայն աֆիշաները յանձ-

կը լինէինք (Ջայներ «Երեւել, երեւել»)։ Ազա- տամիտ կուսակցութեան քաղաքականութիւնն է՝ ուղարկել Հարաւային Աֆրիկա մի աւելի ինքնուրոյն եւ աւելի ուղղափառ անձնաւորու- թիւն, քան ողորմելի լուրջ Միլիներն է։ (Մափա- հարութիւններ)։ Նա կասէր բռնիքներին... Եթէ զուգ ժողովը բրիտանական կայսրութեան մէջ, զուգ պիտի վայելէք ամենալայն ինքնավարու- թիւն—նման Կանադային եւ Աւստրալիային։ (Մափահարութիւններ)։

Յետոյ սկսեց պ. Զառէր, որ մի շատ հա- տարակ եւ պարզ հօլլանդական տիպի եւ միջին տարիքի մարդ է։ Նրան ողջունեցին երկար ծափահարութիւններով։ Նա ասաց, թէ ինքը գոհ է, որ կարող է տանել հետը գոհէ այն լուրը, որ այստեղ կազմակերպվում են այս տեսակ միտինգներ, եւ որ կան իրանց համա- կրող յայտքի անգլիացիներ։ Մի քանի օրից յետոյ եւ մեկնում եմ Հարաւային Աֆրիկա, այն երկրներ, որը 2—3 տարի առաջ ամենա- հարուստ, ամենաբնակչական եւ ամենախաղաղ երկրներից մէկն էր, եւ որը այժմ եւ պիտի գտնեմ ամապացած եւ կործանված, այն երկրներ, որտեղ այժմեան Եօաննիսթուրդի կառավար- ութիւնը ցեղ ցեղի դէմ է կանգնեցրել եւ ծածկել արիւնով եւ ողբ ու արտասուքով։ Յետոյ գալով բոէրների երկու իշխանութիւն- ների պատմութեան պատերազմի ժամանակ եւ պատերազմի պատճառներին, Զառէր ասաց, «Ոմանք արդարապէս են այդ պատերազմը, այն չարաշատ ուղտիմաստունով, որ ներկայա- ցրին բոէրների երկու իշխանութիւնները Անգ- լիային։ Յաւանք եմ, որ չարաբաղը եղաւ նա,

նեղինք տպարանին։ Միւս օրը առաւօտեան ժամը 10-ից սկսվեց տոմսակների ծախվելը, եւ երեկոյեան ժամի 8-ին տուինք այդ ներ- կայացումը։ Այժմս զուգ ինքներդ դատեցէ՛ք, թէ մի քանի ժամվայ ընթացքում ինչքան տոմսակ պիտի ծախված լինէր։ Ուրեմն ոչ թէ բաւական հանդիսականներ կային, այլ թատ- րոնը փայլում էր իր դատարկութեամբ։

Պատասխանատու կարգադրիչ՝ Ի. Յարու- թիւեանց, սիրողներ՝ Ս. Սարգսեանց, Յ. Յովհաննիսեանց, Բ. Յարութիւնեանց, Գ. Զորարեանց եւ Շ. Շաքարեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսի չերամա- պահական կայարանում բացված են ներկա- յումս դասընթացներ ցանկացողների համար երկու առարկայից՝ շերամաբուծութիւն- նից եւ մեղուաբուծութիւնից։ Դա- սընթացը կը տեւի մի քանի շաբաթ։

Մեզ հաղորդում են, որ Ատրպատականի նորոշորդ առաջնորդ Նիկիշ վարդապետ Մու- րադեան արդէն թողել է Ախալցխան եւ ուղե- ւորվում է իր նոր պաշտօնատեղը։ Նա կը գնայ նախապէս Էջմիածին ներկայանալու Վե- հափառ Կաթողիկոսին։

«Торж. Пром. Газета» լրագիրը լսել է, որ վերջնականապէս վճռված է որքան կարելի է շուտ չինել Անգրիկովկասեան նաւթանցքը Բա- զուից մինչեւ Բաթում։ Որովհետեւ մտադրու- թիւն կայ նաւթանցքի կառուցումը յանձնել բացառապէս Ռուսաստանի գործարանատէրե- րին, այդ պատճառով նաւթանցքի կառուցման աւարտումը կախված է այն ժամանակամիջո- ցից, երբ ռուսաց գործարանատէրերը կարող կը լինեն կատարել նրանց տուած պատուէր- ները։ Ասում են, որ նաւթանցքի բացումը տեղի կունենայ ոչ վաղ 1904 թւի սկզբից։

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ ներքին գործերի մինիստր Դ. Ս. Սիպիա- գին շուտով կուղևորվի երկարատեւ ճանա- պարհորդութիւն կատարելու Ռուսաստանում։ Զինուորական մինիստր Ա. Ն. Կուրոպատկին նոյնպէս շուտով ճանապարհ կընկնի դէպի Թուրքեստան, ուր ամառը թիւն ունի մի ամ- բողջ ամիս մնալ։ Ֆինանսների մինիստր Ս. Իււ- Վիտտէ այս ամառը պտոյտ կը գործէ Սիբի- րում եւ Մանջուրիայում։

Օժ. Ноб.» լրագիրը հաղորդում է, որ Օ- դեսայի առեւտրական դպրոցում վերջին քըն- նութիւնների ժամանակ 14 աշակերտներ «կը- տրվեցին» եւ երկրորդ տարին պէտք է մնային վեցերորդ դասարանում։ Ապա՞ծ մի այդպիսի անապատելի հարուստից, անաջողակ աշակերտ- ները վճեցին գնալ Պետերբուրգ, եւ անձամբ խնդրել ֆինանսների մինիստրին, որ իրանց թոյլ տրվի վերադննութեան ենթարկվել օ- դեսոսին։ Այժմ Օդեսայում տեղեկութիւն է

բայց կարծում եմ, որ բարոյապէս նա իրաւացի էր։ (Մափահարութիւններ)։ Գործնականապէս դա մի սխալ էր. (ձայներ, եռչ, ոչ, նրանք պիտի այդ աւելի կանուխ ուղարկած լինէին)։ Եւ ծափա- հար։) Ոմանք էլ արդարացնում են այդ պա- տերազմը, առարկելով, որ հօլլանդական ցեղի ներկայացուցիչները դատաւորութիւն էին կազ- մել վեռնիկու անգլիացիներին Աֆրիկայից... Մի այդ տեսակ դատաւորութեան մասին ինձ ոչինչ յայտնի չէ։ Ճշմարտութիւնը այն է, որ առաջին արշաւանքից յետոյ բոէրները սկսեցին զինվել, (ծափահարութիւններ) «ձայներ, Հայտ լաւ է, այդպէս էլ հարկաւոր էր»)։ Նրանք Անգլիայից վեհանձնութիւն չեն աղբւրսում, այլ պահան- ջում են արդար եւ անկեղծ քաղաքականութիւն։ (Մափահարութիւններ)։ Անմտութիւն է կարծել, թէ այս տեսակ միտինգները պիտի խրախու- սեն բոէրներին, նրանք այդ միտինգներից աւելի չը պիտի ազդվեն, ինչքան ազդվում են այն ջինգոյական թերթերից, որոնք չափազանց վաղաժամ նրանց յաղթված են յայտարարում։ Եթէ մինչեւ պատերազմը բոէրներին աւելին— որ նոյն իսկ երեքպետեան դաշնակցութիւնը անցած է անգլիացիներին կողմ—նրանք կը գերադասէին կուրել, քան իրանց անկախու- թիւնը զոհելը։ (Մափահարութիւններ)։

Ինչ վերաբերվում է խաղաղութեան պայ- մաններին, Զառէրի խորհուրդն է, որ շար- գելով որոշ պայմաններ, թող տալ բոէրներին վայելելու իրանց անկախութիւնը։ (Աղմկայից ծափահարութիւններ)։ ամբողջ հասարակութիւնը ոտքի վրա կեցցէներ է աղաղակում եւ զըլ- խարկներով ու թաշկինակներով հաւանու-

ստացվել, որ ֆինանսների մինիստրը յարգել է աշակերտների խնդիրը։

Արեւելեան Սիբիրի հետ առեւտրական յա- րաբերութիւնները զարգացնելու համար Վար- չավայում կազմվեց «Ռուս-ասիական փոխա- դրող ընկերութիւն» անունով մի ընկերու- թիւն երկու միլիոն հիմնական դրամադրով, որը նպատակ ունի զիւրացնել ապրանքների տեղափոխութիւնը դէպի Սիբիր։ Լօճիի մա- նուֆակտուրիստները նոյնպէս աշխատում են առեւտրական յարաբերութիւններ կապել հե- տու Արեւելքի հետ եւ արդէն ուղարկել են փորձված գործակատարներ Վլադիվոստոկի, Տայիէնվանի եւ Պորտ-Արտուրի առեւտրա- արդիւնաբերական շուկաներն ուսումնասիրե- լու համար։

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Ամսիս 15-ին Խանդավանքեան թատրոնական դահլիճում կա- յացաւ հայ դերասանական խմբի այս սեզոնի առաջին ներկայացումը. խաղացին «Կեանքի արժէք» յայտնի դրաման։ Առաջին երկու գոր- ծողութիւնները սառն անցան, վերջինը իսպառ- թոյլ, բայց երրորդ գործողութեան մէջ օր- Վարդիթեր՝ Աննա Վիտտորովայի դերում, շատ մտածված խաղաց։

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Յունիսի 8-ին Ղուբայի նոր ընտրված ձայնաւորները քաղա- քաղիկ եւ նրա օգնականի ընտրութիւն կա- տարեցին։ Զայնների մեծամասնութեամբ ընտ- րեցին քաղաքաղիկ պաշտօնի համար պ. Սեր- գէյ-բէկ Աղայեանցին, իսկ նրա օգնական ընտրվեց Ալէքսանդր Պօպով։ Այդ առիթով կազմած արձանագրութիւնը ուղարկված է ի հաստատութիւն Բազուի նահանգապետին։

ՇՈՒՇՈՒՑ մեզ գրում են. «Կազմված է մի մեծ ակցիոնեական ընկերութիւն չերամազոր- ծարանատէրեր «Դ. Ահարոնեան եւ եղբ. Տէր- Մկրտչեաններ» անունով։

ԱԼԷՔՍԱՆԴՐՈՊՈԼԻՑ մեզ գրում են. «Ապ- րիլ եւ մայիս ամիսները շատ նպաստաւոր էին բուսականութեանը։ Այս հրաշալի եղա- նակները սակայն մեր գաւառի հայ յիշակաւն- ներին չէին օւրախացնում։ Մարտ ամսի սկզ- բից մեր գաւառի Ղանաղղաւն գիւղում երե- ւում է անասունների ժամապառ եւ հիւան- դութիւնը անցնում է հարեւան գիւղերը Կա- ռավարութիւնը հաստատեց կարանտին։ Կո- տրվում են բաղմաթիւ անասուններ Պիւղա- ցիները չեն կարողանում հերկել արտերը, ցանքաւ մեծ մասը ուշանում է, գիւղի մէջ հիւանդ կարծած անասունները զննականար են լինում, մնացած անասունների դարման եւ խոտ չը կայ, արգելված է գնալ «Եսալահ» (ա- մառանոց), գիւղում ոչ խոտ կայ, ոչ դարման եւ ոչ փող. կոտորվում են անասունները օ- մանք ցաւից եւ ոմանք սովից։ Սոսկալի է

թեան նշաններ է անում)։

Զառէրից յետոյ սկսեց խօսել պարլամենտի անդամ Լիօյը Զօրը. «Կայսրութիւնը երկու տարի է, որ գործիք է դառել բօրսայի պա- ռոնների ձեռքում, եւ արդէն ժամանակն է, որ առաջ գան ազնիւ, առողջ եւ ճշմարիտ հայրենասէրները (Մափահ.)։ Այդ պատերազմը Մեծ-Բրիտանիայի համար միայն անպատու- թիւն է բերում։ Մենք զբաղված ենք մեր կայսրութեանը ոսկեայ դաշտեր միացնելով. միացնում է իր երկրին ամբողջ աշխարհը, կորցնելով իր սեփական հողի ու սիրտը... Մենք հանդիսատես ենք մի այնպիսի ժողովրդի, զոհաբերութիւններին եւ նահատակութեան, որի դաւանանքն է, թէ կայ մի աւելի խոր, աւելի վսեմ ու սուրբ բան, քան խոշոր կալ- ուածներ յափառակելու իղձը։ (Մափահ.)։ Մարդկութիւնը մեղապարտ է այդ փոքրիկ ժողովրդի առաջ, որը դիմադրելով աշխարհի ամենաուժեղ տէրութեան, գերազանցում է քաջութեամբ մեռնելը, բայց մամոնայի գոհ- իկ ջուրմբին չը խոնարհվելու»։ (Աղմկայի ծափահարութիւններ)։

Մի քանի փոփոխութիւններից յետոյ, միաձայն ընդունվեցան հետեւեալ որոշումները։ 1) Լօնգօնի քաղաքացիների ներկայ միտինգը, ժողովված Queens Hall-ում, դատաւարաւորում է կառավա- րութեան քաղաքականութիւնը Հարաւային Աֆրիկայում, որը ընդգէմ է բրիտանական ժո- ղովրդի բարձրագոյն շահերին եւ սրբազան աւանդու- թիւններին, բողոքում է այդ անար- դար եւ կորստաբեր պատերազմը շարունակելու

չինականների վիճակը, Կառավարութիւնը հրա- մայլ է ամեն կատարած տաւարի համար 10 ր. փող տալ Բայց դա չինականին ինչ կօգնէ, նա պէտք է արար հերկէ, վարէ, ցանէ, արգել- ված է քաղաք անասուն բերել ծախելու։ Գա- ղաւումս մեծ դժուարութեամբ է միս ձար- վում, գաւառի հետ երթեւեկութիւնը դադա- րել է. միայն ձիով թոյլ է արված քաղաք գալ, բայց, զժողովրդաբար, մեր գաւառում ձի քիչ կայ։ Յօրենքը, որ մարտ ամսին ծախվում էր 80—85 կ., այժմ ծախվում է 1 ր.—1 ր. 5 կ., այդպէս է եւ գարին, իւղը»։

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Երեք հոգուց բաղկանած մի փոքրիկ աւազակային խումբ յունիսի 7-ին կողոպտում է Դիլավաթ գիւ- ղացիներին՝ վերցնելով մէկից 20 ր., միւսից 107 րուբլի, երրորդից գրաւում է գրաստ- ները, պահանջելով, որ վերջինս փողեր բերէ տայ, որ ազատեն գրաստները, Կողոպտվողնե- րը գնում գանդաւորվում են Սայաթ-Նիչի գիւ- լայ տնտեսներին, որը ժամանակ չը կորցնելով վերցնում է իր օգնականներին Կեանք ցիւ- ղից եւ գնում է աւազակների ետեւից, իմաց տա- լով Դէվիչիի պրիստաւ Կօնիւշեվսկուն եւ Խալանջ գիւղի տնտեսներին, որոնք համոսում են ան- տառը աւազակային խմբին։ Սկսվում է սար- սափելի հրադանաձգութիւն, որի միջոցին սպանվում է աւազակապետը, իսկ նրա եր- կու աւազակ ընկերները փախչում են՝ տանե- լով հետեւը կողոպտված փողերը։ Սպանված աւազակապետ Կիսար թաղված է Դիլավար գիւղում»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՐԻՁԻ ԱՂԱՆԵՐԸ

Եթէ յիշում են ընթերցողները մեր «Այդ օրը շատ էլ հեռու չէ» յօդուածով («Մշակ» № 50) մենք այն միտքն էինք յայտնել, որ ներ- կայումս Մարպատականի՝ Խաւարի մէջ թաղ- ված ժողովուրդը, առաջնորդի ընտրութեան խնդրում չէ կարող օգտվել Վեհափառ Կաթո- ղիկոսի նոր կարգադրութիւնից։—Որովհետեւ— աւել էինք մենք այդ յօդուածում—թաւրիղե- կի աղաները իրանց անձնական հանձնքին եւ կրէին բաւականութիւն տալու համար իր ի- րաւունքից տեղեկութիւն չունեցող ժողովրդի ձայնը խեղդում են։

Այժմ տեսնենք, թէ ինչ են ասում նորագոյն փաստերը։

Ով որ ուշադրութեամբ հետեւել է Թարի- ղի ընտրութիւններին, նա անշուշտ շատ թէ քիչ հասկացած կը լինի, թէ ինչպիսի միջոցներ են ձեռք առել մեր ափսարկած աղաները եւ նրանց սարկաւթն արբանեակները ժողովրդի անունով իրանց ցանկութիւնը լրացնելու հա- մար։

Նրանք սկզբում պատգամաւորների ընտ- րութեան ժամանակ բարձրացրին «օտարա-

դէմ եւ պահանջում է խաղաղութիւն այնպիսի պայմաններով, որոնք ընդունելի լինեն մի քաջ եւ խաղաղասէր ժողովրդի համար եւ երաշ- խաւորեն նրա կառավարչ անկախութիւնը։ 2) Ներկայ միտինգը արտայայտում է իր գալոյթը կառավարութեան դէմ, որ գործադրում է բրիտանական զօրքը կալուածներն այրելու եւ կանանց ու երեխաներին աւար տոնելու հա- մար, եւ պահանջում է, որ նա անյապաղ թողնէ այդ կենտրոնացման քաղաքականու- թիւնը, որը ամբողջ աշխարհից դատաւարովեց Սպանիայի եւ Կուբայի դէպքում, իրեւ մի բռնութիւն մարդկութեան դէմ եւ իրեւ մի անպատուաբեր հանգամանք զօրքերի համար, որոնց ստրկութեւն կատարել այնպիսի գործեր, որոնք զոհելի են ամեն մի պատուաւոր մար- դու համար»։

Միտինգը ցրվեց ժամը 11-ին եւ փողոցի ցոյցերը վերականգնանայան։ Լաբուշէրի կառքը երկու ձիաւոր ոստիկաններ դժուարութեամբ էին պաշտպանում բազմաթիւ յարձակողներ իրից։ Վայ էր որ մէկի մասին—ուղիղ թէ սխալ—մի ձայն լսվէր, որ «Here is a pro- Boer»! («հաւ մի պրօ-բօէր») եւ խեղճ են- թարկվում էր ամեն տեսակ հալածանքների Հայրենասիրական ցոյցերը կամաց կամաց փոխվեցին օտարների դէմ ուղղած ցոյցերի։ Տեղի ունեցան բազմաթիւ ձերբակալումներ։ Ոստիկանութեան ջանքերը եւ տեղող անձրեւը արգելեց եղան ցոյցերի ընդարձակման եւ գի- չերվայ ժամը 12-ին փողոցները ստացան իրանց առօրեայ կերպարանը։

կաններն ինչպէս Վրացիները, բաւական էին աղանդները, ընտրելու եւ ընտրվելու իրաւունք չունենալ: Հասկանալով ի՞նչ է ինչնա՞յն Մենք կը պատասխանենք այդ հարցին, բայց նախ քան այդ անհրաժեշտ ենք համարում ընթերցողին երկու խօսքով ծանօթացնել այդ բառարկաններին հետ:

Ով չառ թէ քիչ հետաքրքրվել է պարսկահայերի եւ յատկապէս թաւրիզի հայերի վերաբերմանը, նրան անշուշտ յայտնի է, թէ բարոյական զեռ եւս չառ աղքատ, բայց նոյնքան եւ աւելի հպարտ թաւրիզիները իրանց հասարակական գործերը վարում են զրօններէն ձեռքով: Նրանց ուսուցիչները, նոր սերունդի դաստիարակները, թատրոնի, գրադարան-ընթերցարանների ղեկավարները, թաւրիզի անուան պատիւ բերող «Լաւարանական» եւ «Հաւաքաբօլական» ընկերութիւնների հիմնադիրները եւ վարիչները, նրանց բժիշկները—մէկ խօսքով, ժողովրդի առաջադիմութեան գործի մըլ շահները—գրեցիք ինչ որ են եւ զի եւ մինչեւ եւս այսօր էլ գար ձեռք գրեցիք ինչ որ են:

Այժմ կարծեմ, ընթերցող, հասկանալի է, թէ թաւրիզիք աղանդներ ունենալ են ինչպէս էին ընտրելու եւ ընտրվելու իրաւունքից զրկել կամ մենուս:

Անցնենք աղանդների ներսնադիմութիւնը եւ կեցեալութիւնը ընտրող մի ուրիշ փառախոս: Յայտնի է, որ թաւրիզի աղագային ջողերը, Այլատեան եպիսկոպոսին տապալելու համար—ամեն անգամ, երբ կուրծքը ծեծելով բարձրացնում էին իրանց վայնասունը—ամբողջ Պարսկաստանին յատուկ խորամանկութեամբ, թէ քաղաքավարութեամբ, առաջ էին դնում հետեւեալ բանաձեւը՝ «մեզ հարկաւոր է ուսումնասիրող առաջնորդ»: Արդարեւ մի առարկութիւն, որ հիմունքներից զուրկ չէր իսկ այժմ ինչ են առում այդ հետաքրքիր վանքերը: — «Ռուսաստանի հոգեւորականները Պարսկաստանի քաղաքականութեան անձնաթիւ են, մանաւանդ Աւարպատականի թեմը չեն կարող կառավարել: Եւ գիտե՞ք այդ չըջանալից, ժողովրդաւոր, տաղանդաւոր գլուխները ուր են դիմում իրանց ուղած առաջնորդին դանկու համար:—Երեսնադէմ, Կ. Պոլսի, Ամսթերդամի, Ստաւրպոլի, Պրիզորի, Ստաւրպոլի, Տեմսիւմ էք ծանալաւոր աղանդի կերպը որքան բարեբաղի է: Նրանք կամենում են կրկին առաջնորդ ունենալ Ստաւրպոլի, այն Ստաւրպոլի, որին ծեծով թաւրիզից դուրս քնցին, այն առաջնորդին, որը թաւրիզից դուրս գալիս, ինչպէս պատմում են, թըքել է թաւրիզիներին երեսին եւ ապա հետագայից ինչ ինչ փնտրել, ժողովրդի շահն է այդ պահանջում: ամբողջ թեմի կամքը արտայայտող աղանդներ ի սէր ժողովրդի պէտք է այդպէս անեն: Հարկաւոր է այդպէս անել Այլատեանի հետաքրքիր եւ Մուրադեանի, Ռուսաւալանի թաւրիզ չը մոռնալու համար...»

Իսկ դուք, ընթերցող, լսեցէ՛ք մի նոր փառախոս: Թաւրիզի աղանդներ եւ նրանց փնչից կախ ընկած արքայանականներ հոգին կատարելապէս ճանաչելու համար: Կարգադէք դուք Նիշնի վարդապետ Մուրադեանին նամակը «Մշակ» 2) 120-ում, որ ուղղված էր խմբագրութեան եւ հասարակութեան կրկին կարգադէք այդ նամակից զոնէ հետեւեալ տողերը, որ թաւրիզի են գրել Մուրադեանին:—«...Յետոյ իմացվեց նրանց (ղաղաքիներ—այսինքն աղանդի) յետ կանգնելու պատճառը—այդտեղից (Երեսնադէմ) Պարզեանը (Սուքեան եւ...) արանց նամակով յայտնում է, որ Նիշնի վարդապետ Մուրադեանին չընտրեն, եթէ ընտրվեց կը գայ եւ ձեռք հուպ կը տայ...»: Ինչպէս տեսնում էք, այժմ բացվում է մի նոր գաղտնիք, որ գալիս է թէ եւ աւելորդ անգամ, բայց զուգարդ պարզաբար հաստատելու հեր նախորդ յօդուածում յայտնած միտքը, այն է թէ ժողովրդի անունով խօսող անխիղճ աղանդներ Պարզեանների հետ կարող են չաղկապված մնալ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԻՐ

—Կ. Պոլսի պարսկական զեռաւոր Միշքա Մահմուդ Խանը, որը վաղուց արդէն արձակուրդ է վայելում, այլ եւս չի վերադառնալ: Պոլսի, այլ նշանակվում է Բիրման նահանգի նահանգապետ Մի եւ նոյն ժամանակ պարսից զեռապետութեան շատ ուրիշ անդամներն եւս յետ են կանչվում Կ. Պոլսից եւ պաշտօններ են ստանում պարսկական նահանգներում «Berl. Tageblatt» լրագիրը պարսկական զիպլոմատիական աշխարհում տեղի ունեցած այդ փոփոխութիւնը հետեւեալ կերպով է բացատրում: Անցնելու տարի Շահ Եւրպայ արած իր ճանապարհորդութիւնից վերադառնալու ժամ:

մանակ, այցելութիւն գործեց սուլթանին: Դա երկու արեւելեան թագաւորների հանդիպումն էր, եւ թիւրքաց լրագիրները, նկարագրելով այդ, աւելացրին, թէ Շահը համբուրեց սուլթանի ձեռքը: Պարսիկների կողմից իսկոյն եւ ի՞նչ տեղի ունեցաւ այդ լուրի կտրական հերքումը եւ պարսից զեռապետ ամեն ջանք գործ դրեց ստիպելու թիւրքաց կառավարութեան, որ վերջինս էլ իր կողմից հերքէ այդ լուրը: մատնացոյց անելով այն բանի վրա, որ այդպիսի լուրը Շահի վարկը գցում է նրա հպատակների աչքում: Բայց Մահմուդ-Խանի բոլոր ջանքերը ի դերեւ ելան, «ձեռք համբուրելը» այդպէս էլ առանց հետեւանքի մնաց, եւ թիւրքաց մահմուդ օգուտ քաղեց զրանից սուլթանի խալիֆատը փառաբանելու համար: Պարսից Շահը շատ վշտացած էր զրանից, եւ Մահմուդ-Խանի հետաքրքիր պաշտօնից կապում են Շահի դժբախտութեան հետ, որը չը կարողացաւ ներել զեռապետին, որ նա անկարող գտնվեց հերքել սուլթանի թիւրքաց կառավարութեանը այդ լուրը:

—Մարդիկում նորից հակադեմական միտքից կայացաւ, որին ներկայ էր անագին ամբողջ եւ ուր արտասանվեցին շատ կրակոտ ճառեր: Հետեւորդները, համարեա առանց բացատրութեան, վերջացնում էին իրանց ճառերը հետեւեալ նախադասութեամբ: «Պէտք է այդպէս վանքերը»: Իսկական անկարգութիւններ սկըսվեցին միայն միտքից վերջանալուց յետոյ, երբ յոյզ անողները զրկեցին փողոցները «կեցցէ հանրապետութիւն» աղաղակելով: Հարկ եղաւ ժամադրաձեւի վրա եւ ոստիկանութեան միջամտութիւնը՝ կարգը վերականգնելու համար:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՆՑ

19 յունիս

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Հրատարակված է Բարձրագոյն հրաման նախնական ցէնզուրայից ազատ պարբերական հրատարակութիւնների տրվող նախադրույթներին ոյժի վերջնական ժամանակամիջոցը հաստատելու մասին: 1) Ի լրումն ցէնզուրական կանոնադրութեան 144-դ յօդուածի որոշելու առաջին նախադրույթները իր ոյժը պահպանում է մէկ տարի այն օրից, որ օրից պարբերական հրատարակութիւնը ստանում է այդ նախադրույթները, եթէ այդ ժամանակամիջոցում երկրորդ նախադրույթներն տրված չը լինի: Եթէ մի տարվայ ընթացքում պարբերական հրատարակութիւնը երկու նախադրույթներն կը ստանայ, այն ժամանակ այդ նախադրույթներն իրանց ոյժը պահպանում են երկու տարվայ ընթացքում երկրորդ նախադրույթներն ստանալ օրից: Եթէ այդ ժամանակամիջոցում երկրորդ նախադրույթներն չը ստացվի, վերոյիշեալ ժամանակամիջոցները լրանալուց յետոյ պարբերական հրատարակութիւնը ազատվում է ստացած նախադրույթներին: Եւ զրանից յետոյ ստացված նախադրույթները նորից առաջինն է համարվում: 2) 1-ին բաժանմունքի մէջ բացատրված կանոնի ոյժը տարածել այն նախադրույթներին վրա, որոնք տրված են պարբերական հրատարակութիւններին մինչեւ ներկայ օրէնսդրութեան հաստատումը:

Հրատարակված է ներքին գործերի մինիստրի հետեւեալ կարգադրութիւնը: «Պետական խորհրդի Բարձրագոյն հաստատված կարծիքը տեղի ունենալուց յետոյ՝ նախնական ցէնզուրայից ազատ պարբերական հրատարակութիւններին ցէնզուրայի եւ մամուլի վերաբերեալ կանոնադրութեան 144 յօդուածի հիման վրա տրված նախադրույթներին ոյժի վերջնական ժամանակամիջոցը որոշելու մասին եւ ի նկատի ունենալով այդ որոշման ոյժի տարածել այն հրատարակութիւնների վրա, որոնք նախադրույթներն են ստացել մինչեւ ներկայ օրէնսդրութեան հաստատելը, ներքին գործերի մինիստրը որոշում է. ազատել «Виржевые Ведомости», «Восход» եւ «Руския Ведомости» լրագիրները եւ «Хозяин» թերթը նրանց տրված երեք նախադրույթներինց: Պրոֆէսոր Յվլյանովին հրամայված է լինել Մոսկուի Յիպատիական եւ Բուժանցիկեան թանգարանի ղեկավար:

ՊԱՐԻՉ: Պատգամաւորների ժողով: Երեկոյեան նիստ: Այլման առաջարկութիւն է առնում այն մտքով, որպէս զի անյապաղ փակվեն բոլոր միաբնակութիւնները եւ նրանց գոյքը յարգելու գրաւվի Հետեւը պահանջում է, որ իր առաջարկութիւնը անյետաձգելի ճանաչվի եւ իսկոյն քննութեան ենթարկվի: Անյետաձգելիութիւնը մերժվեց: Լաֆէրրէր պահանջում է 1810 թ-ի օրէնքի վերացումը, որով քրիստոնեայ դաւանութեան արեւելներին տրվում է դաստաւութեան իրաւունք: Այդ առաջարկութեան անյետաձգելիութիւնը մերժվեց:

ՊԱՐԻՉ: Պատգամաւորների ժողով: Քննվում է լրացուցիչ կրէդիտ չինական արշաւանքի համար Սաւա բողոքում է այն բանի դէմ, որ պատերազմը սկսված էր առանց պարլամենտի թոյլտուութեան եւ պախարակում էր միաբնակներին գրգռել զիրք բռնելու համար, իսկ եւրոպական զորքերին—ամօթալի գործողութիւնների համար: Դէկլարացիոն նորից երախտագրութիւն է յայտնում զորքերին: «Ձիւնաստանը առաջինը, առում է նա,—սկսեց պատերազմական գործողութիւնները, թոյլ տալով կոտորած»:

Թէպէտ եւ նա, մինիստրը, դեռ չէ կարող աւելի, թէ խաղաղութիւնը պահովված է, բայց կարող է հաստատել, որ ամեն ինչ արված է նրա պահովութեան համար: Ապա Լանէսսան պաշտպանում է զորքերը այն պախարակութիւնների դէմ, թէ նրանք թոյլ են տուել անօգուտ անգլութիւնները: քննութիւնը ցոյց տուեց, որ ամբողջ արշաւագործարմի մէջ ընդամենը քսան այդպիսի գործողութիւններ են եղել եւ այն էլ հատկապէս զեռապետ, որոնք խիստ էլ պատմվել են: Կօչին հարցնում է, թէ ինչ է ուղում Պրանսիան անել այժմ Զինաստանում (?) Դէկլարացիոն պատասխանում է, որ Պրանսիան, որպէս եւ մնացած պետութիւնները, կը թողնէ զորքերը դէպի Պէկին տանող ճանապարհի վրա: Սաւա պահանջում է քննութիւնը նախակի արշաւագործարմի կատարած անգլութիւնների գործի վերաբերմամբ: Միլիում եւ մինիստր-նախագահը առարկում են այդ պահանջի դէմ: Սաւա, ընդհակառակը, պնդում է զրա վրա: Վիլիանի առաջարկում է 1000 Քրանկ շնչով լրացուցիչ կրէդիտից, որովհետեւ ցանկանում է, ինչպէս ինքն բացատրում է, որպէս զի Պրանսիան այլ եւս միաբնակների հովանաւորող չը մնայ: Մինիստր-նախագահը խօսում է զրա դէմ, յայտնելով, որ կառավարութիւնը չի թոյլ տալ թուլացնելու այն պարտաւորութիւնը, որ տալիս է Պրանսիային գեակալուող դրութիւն: Վիլիանի առաջարկութիւնը մերժված է: Սաւա ընդունվեցին լրացուցիչ կրէդիտի վերաբերեալ նախադրի առանձին յօդուածները, որից յետոյ նիստը փակվեց:

Պէկին: Այսօր չինացիները ստանձնեցին Պէկինի բրիտանական թաղի մի մասի կառավարութիւնը: ՄԱՐԻՆԻ: Պաշտօնական հեռագիրներին նախելով, Օպորտոյում ժամտախտ երեւալու լուրը սուտ է:

ԲԵԼԳԻԱ: Օտարերկրեայ թերթերից այստեղի թերթերում արտատպված լուրը, իբր թէ ֆինանսների մինիստրը հրաժարվել է պաշտօնից, բողոքով են անհիմն է:

Պէկին: Դեպքայինների երէկվայ ժողովում հաստատվեց չինական իշխանութիւնների կողմից հրատարակվելիք կոչի ծրագիրը, որով աղգաբանութիւնը հանգստացնում են օտարազգի զորքերի հեռացման եւ այն երկրաչների նկատմամբ, որ ազդում է չինական զինուորների վերադարձը:

ԼՈՒՆԴՈՆ: Լորդերի ժողով: Մովային մինիստրը հաղորդում է, թէ ամերիկական «Մայն» շաբաթ, որ Աֆրիկայի հարաւում ծառայում էր իբրեւ հիւանդանոցային նաւ, նաւատեղերի կողմից ընծայված է անգլիական նաւատորմին: Սպէնսեր ուրախութիւն է յայտնում այդ ընծայի առիթով, իսկաւելով այդ բանը իբրեւ երկու երկրների մէջ եղած լաւ յարաբերութիւնների ապացոյց:

ՊԱՐԻՉ: Առաւօտեան, քաղաքային տան մեծ դահլիճում յանձնվեց Պարիզ քաղաքի ընծան, որ մի չքեղ սեղանին անօթ է: Պարիզի քաղաքային խորհրդի նախագահը համակրական ճառ ասաց:—Պարիզի քաղաքային խորհրդի պատգամաւորները երկուդեան ճաշկերոյթ տրուեցին:—Երեկոյեան զնացքներով «քաղցնեցին» եւ հիւրերից շտաբը արդէն ճանապարհ ընկան Պարիզից:

դել 136: Աւար են առնված 131 հրացան, 15,800 փամփուշտ եւ 304 սայլ:

ՊԱՐԻՉ: Երէկ, այն երեկոյթին, որ սարքել էր Պարիզի պաւստական կուրը քաղցնեցին համաժողովին առիթով, ուսւ հիւրերի անուանից խօսեց գեներալ Բիլիտէր: Նա ցանկացաւ չէխերին այսուհետեւ էլ զնալ անկախութեան ճանապարհով եւ սերմանել իրանց արտում սէր դէպի մեծ Ռուսաստանը, մանաւանդ զարգացնել առեւտրական յարաբերութիւնները Ռուսաստանի հետ: Նրանց համար այնտեղ շատ տեղ կը գտնվի: Պետերբուրգից եկած պրոֆէսոր Սվատկովսկի գովեց քաղցնեցին կարգապահութիւնը, համարելով այդ բանը անհրաժեշտ ամբողջ պաւստականութեան համար: Ապա նա առաջարկեց ֆրանսիացիներին եւ ֆրանս-պաւստական միութեան կենացը:

ԿԱՊԵՏԱՊՈՆ: Գնապետ Դալլէի մտաւ տեղացիներին պատկանող Մակլիտ անուանված երկրից, Պրանկէի չըջանում: Բօժները թողին այդ չըջան եւ այժմ հարեւան տեղերում են թափառում: Հրամանատար Փուչէ, որ հարկաւորված է նահանջել, պիտի գնայ այն երեք ճանապարհներից մէկով, որոնց այժմ գրաւել են անգլիացիները:

Կ. ՊՈԼԻՍ: Բակտերիօլոգիական քննութիւնը հաստատեց, թէ ժամտախտ է այն հիւանդութիւնը, որին ենթարկվեց մի լոյն Ղալաթայում: ԲՈՒՆԱՐԵՍ: «Րուսիական գործակալութիւնը» հերքում է, իբրեւ անհիմն, Վիլենայի լրագիրների հաղորդածը: Իբր թէ Կարլ թագաւորը այս տարի հրաւիրված է աւստրո-ունգարական բանակի զօրախաղերին:—Երեք լրագիրներ աղկերին թէ օտարերկրեայ լրագիրների բողոք տեղեկութիւնները բուժական թագաւորական զոյգի ճանապարհորդութեան ծրագրի եւ օգոստոսի առանձին Սինայա դաւալում մասին բողոքովին սուտ են:

ԲԵԼԳԻԱ: Սէնիցայից, Նօվօ-Բազարի սանջակից, նորից հաղորդում են տեղացի ալբանացիների եւ թիւրքաց զինուորների թշնամական գործողութիւնների մասին սերբերի դէմ: Թիւրք զինուորները գրաւեցին մի քանի սերբ գիւղեր եւ նեղացնում են ազգաբնակչութեան այն պատրուակով, թէ նա զէնք ունի թագաւոր:

ՊԱՐԻՉ: Ինչպէս հաղորդում են Տանսերից, այնտեղ է հասել, նաւահանդէսի պատճառով, ֆրանսիական մի նաւախումբ, որ բաղկացած է 12 նաւերից:

ԽԱՐԿՈՎ: Եկաւ վաղուց սպասվող անձրեւ, որ առանց փոթորիկների թափվեց տաք ժամից աւելի: Գարնանացանքների համար այդ անձրեւը բարեբար է: Բանջարանոցներն ու այգիները պիտի լաւանան:—Առեւտրական սնանկ բանկի գործերի կառավարութեան մէջ մտան երդուեալ հոգաբարձուները:

ՎԱՐՇԱՎԱ: Ֆէլիկս Կրասնիսկի, զրամբարկչերի կոտորածների խմբագրութեան, որ ձերբակալման միջոցին սպանեց երկու ոստիկանական վերակարգներ եւ վտանգաւոր վէրք հասցրեց մի ոստիկանի, կը դատվի նահանգական դատարանում յուլիսի 27-ին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Պօստան, որ Պետերբուրգում, ուստաց արտաքին առեւտրի բանկում, իւրացրել էր վաճառական Լուրիէի 62,000 ռուբլին եւ փախել ընկած է Բենդերում: Գտնվել է 42,000 ռուբլի:

20 յունիս

ԼԵՅՊՅԻՆ: Լէյպցիգեա՝ բանկի անանկութեան պատճառած կորուստների շտրիւ կօնկուրսի տակ ընկան Լէմանի Ֆլանկի գործարանը Բէրլինգէնում (Սաքսոնիա), մի բաժնետիրական ընկերութիւն 750,000 մարկ զրամագլխով ու լէյպցիգեան Բրուտային գործարանը Բրանդսում, եւ մի բաժնետիրական ընկերութիւն 1,200,000 մարկ զրամագլխով: Լէյպցիգի «Humaniter Stiftung»-ը լէյպցիգեան բանկի բաժնետոմս իւր կորցրեց 500,000 մարկ: Կօնքուրգում Գրէյնի անունով մէկը այնպիսի բուսահատութեան մէջ ընկաւ լէյպցիգեան բանկի անանկութեան պատճառով կրած վնասների շտրիւ: որ անձնասպանութիւն գործեց, նախապէս ռէվօլվերով ծանր կերպով վիրաւորելով կնոյն ու աղկանը:

Նիժնե-ՈՐԿ: Վերջին օրվայ ընթացքում 183 արեւահարութեան զէպը պատահեց: Եւ 87 մահացան նոյն պատճառից: Վերջին հինգ օրվայ ընթացքում 136 հոգի են մեռել արեւահարութիւնից:

ԲԵՐԼԻՆ: Լօրդի «Բայլերն» չոգենաւով, որ դուրս է գալու Շահագայից յուլիսի 7-ին, Գերմանիա է ճանապարհվելու չինական արտաւարդ զեռապետութիւնը պրինց Չուճի առաջնորդութեամբ: Շոգենաւը օգոստոսի 9-ին հասնելու է Գենուա:

